Վռամ Բ.-ն է համարւում (227–294) կանգնած է մի մարդկային ֆիգուր՝ ձիու գլխով:* Ապա յատուկ անունները մեր հին մատենագրութեան մէջ, ինչպէս Վարազ-Տրդատ, Վարազ-Շապուհ, Վարազ-Վաղան, Վարազդատ, կապուած են, անշո՛ւշտ, հեթանոսական նման աւանդութեան հետ: Կարող են, գուցէ, մասամբ այս հասկացողութեան վերայ ազդած լինել եւ աւետարանական պատկան հասկացողութեամբ, բայց անկարելի չէ, որ բարոյականը նիւթական կամ մարմնական հասկացողութեան փոխարկուի, եթէ այդպիսի փոխարկութեան համար հաւատալիք կայ: Հայկական հեթանոսական աստուածները կամ կուռքերը դեւերի են փոխարկուած, Տրդատն էլ խոզացեալ մարդ է, որպէս դարձեք դեւերի կամ կուռքերի, քրիստոնէութիւնը հալածելով:



Պատկ. 44ա.

մութիւնները դեւերի եւ խոզերի մէջ եղած կապակցութեամբ, եւ եկեղեցական հայրերի մեկնաբանութեամբ: Ոսկեբերան Մատթ. Ը. 31 մեկնութեան մէջ ասում է. «Պարտ է գիտել առոյգ թէ մարդք խոզացեալք դիւրաւ ըմբռնեն ընդ դիւաց իշխանութեամբ»:† «Մարդք խոզացեալք», ի հարկէ, բարոյական հասկացողութեամբ...

Բայց Օձունի կոթողի վերայ կան նաեւ արական եւ իգական սեռի ֆիգուրներ, հաւանօրէն, այր եւ կին ննջեցեալները, որ իրենց հագուստով մեծ նմանութիւն են բերում սասանեան Ե. դարի դրամների զգեստաւորութեան, որ շատ օրինակներով տեսել ենք Լենինգրադի Էրմիտաժի ժողովածուի մէջ, միայն այստեղ ձողաբարձ խաչ բռնած մի ձեռքում, ինչպէս նաեւ կոպտական արուեստի հնագոյն գերեզմանական քանդակների մէջ ենք տեսնում, որից այստեղ մի օրինակն ենք տալիս պարզ կացուցանելու

---

*Spiegel. Iranishe Alterthümer. Եր.

†Ոսկեբ. Մեկնութիւն Մատթէոսի, էջ 443, Migne. p. g. Col. 335: Յող. Աղոնցի. Սիոն. 1938. Նոյեմբ. 336: